ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 01

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱՑ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագծերը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, որոշում եմ.

1. 06-093-0012-0034 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,07496 հա հողամասի հասցեն թողնել անփոփոխ՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Պուշկինո 2-րդ փողոց թիվ 99 բնակելի տուն:
2. 06-093-0012-0034 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,01 հա հողամասին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Պուշկինո 2-րդ փողոց թիվ 99/2 հողամաս:
3. Հողամասի սահմանները որոշվում են «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2022 թ. 01 03
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 02

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0020-0034 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԺՈՐԱ ՕՀԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Խալաթի Օհանյանի կողմից ներկայացված դիմումը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0020-0034 կադաստրային ծածկագրում գտնվող 222,0 քմ բնակելի կառուցման հողամասի հողահատկացման հիմքերը՝

ա/ Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0020-0034 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 222,0 քմ

բ/ հողմասի սահմանները և հատագիծը համաձայն « ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 222,0 քմ հողամասը, որի նկատմամբ չեն պահպանվել հողհատկացման հիմքերը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Ժորա Խալաթի Օհանյանին և

մին չև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը, բացառությամբ 2016թ. ինքնակամ կառուցված շինությունների:

3. Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0020-0034 կադաստրային ծածկագրի հողամասի վրա , այլ անձաց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հակադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված 55,7 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 11,3 քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Ժորա Խալաթի Օհանյանի սեփականության իրավունքը:

4.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0020-0034 կադաստրային ծածկագրի հողամասի վրա առկա են 2016 թվականին ինքնակամ կառուցված 6,0 քմ ներքին մակերեսով բնակելի տան մաս, 3,1 քմ մակերեսով բաց պատշգամբ /u/h/ և 15,3 քմ մակերեսով ծածկ:

5.Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Վարդաբլուր 4-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն:
6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

20 22 թ. 01 04
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 03

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0103-0100 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շողիկ Մագթաղյանի կողմից ներկայացված դիմումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 16-րդ մասերով ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0103-0100 ծածկագրում գտնվող 5093,01 քմ գյուղատնտեսական նշանակության վարելահողի հողահատկացման հիմքերը՝

ա/ Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0103-0100 ծածկագրի հողամասի մակերեսը 5093,01 քմ,

բ/հողամասի սահմանները և հատագիծը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 5093,01 քմ հողմասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Շողիկ Հարությունի Մագթաղյանին:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

20 22 թ. 01 05
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 04

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0068-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՇՈՂԻԿ ՄԱԳԹԱՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շողիկ Մագթաղյանի կողմից ներկայացված դիմումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0068-0004 ծածկագրում գտնվող 3646,5 քմ բնակելի կառուցման հողամասի հողահատկացման հիմքերը՝
ա/ Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0068-0004 ծածկագրի հողամասի մակերեսը 3646,5 քմ,

բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 3646,5 քմ հողմասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Շողիկ Հարությունի Մագթաղյանին:
3.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0068-0004 ծածկագրի 0,36465 հա հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Կուրթան, 12-րդ փողոց, 4-րդ նրբանցք թիվ 34:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

20<u>22</u>թ. <u>01</u> <u>05</u>

գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 05

ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2022 թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԼԻՊԱՐԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

20 22 թ. 01 05
գ.Գյուլագարակ